

ՇՈՂԻԿ ՍԱՖՅԱՆ



ԱՄԵՐԱԼԻԿ  
ՆՎԵՐԸ

ՀԱՅՊԵՏՏՐԱՏ

<u>891.99-9B</u>	<u>15546</u>
<u>U-90</u>	<u>Uniflur. E.</u>
<u>Ustazmudzuk</u>	<u>Ustazmudzuk</u>
	<u>In. 504</u>
<u>151.14</u>	<u>51.16</u>
	<u>502</u>

$\underline{15} \mid \underline{144}$	$\underline{5} \mid \underline{145}$	$\underline{144}$	$140$
			$502$

ՆԱԳՅԱՆ ԿՐԴԱԿ

891.99-93

0-90

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
1961 թ.

# ԱՄԵՆԱԱՎ ՆՎԵՐԸ

+5546  
 $A - \frac{\pi}{30672}$




ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՍՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԺԻ  
ԿՐԵՊԱՆ

1940

Շատիկը, Փրոնտիստիսը, զլխագուրդեն ու վերջնազարդեք  
նկարիչ՝ Ան. ԳՈՅՎԱՐՅԱՆԻ

Ш. САФЯН  
**Лучший подарок**  
(На армянском языке)  
Армгиз, Ереван, 1949



## ԱՄԵՆԱԼԱՎ ՆՎԵՐԸ

Կար մի մայրիկ։ Այդ մայրիկն ուներ երեք երեխա։  
Անկի անունը Լուսիկ, մյուսինը՝ Յոլակ, իսկ եր-  
րորդինը՝ Արեգ։  
Ամեն առավոտ մայրիկը բոլորից շուտ արթնանում,

կարդի էր բերում սենյակները. թեյ պատրաստում, երեխաներին կերակրում, դպրոց ճանապարհում:

Շատ բարի ու հոգուտար էր մայրիկը:

Լուսիկը, Յոլակն ու Արեգը միշտ տաճում էին, թե ինչոքես հասուցեն մայրիկի բարությունը, ինչնվ ու շտխացնեն նրան:

Լուսիկն ասում էր.

— Ես որ մեծանամ, մայրիկի համար աշխարհի ամենազեղեցիկ շորը կդնեմ:

Յոլակն ասում էր.

— Ես մայրիկին զբոանքի կտանեմ աշխարհի ամենազեցիկ վայրերը:

Իսկ Արեգը՝ ամենափոքրը, խոսք չէր գտնում ասելու ու միշտ լրում էր:

— Իսկ զն, Արեգ, ինչ նվեր կտաս մայրիկին, — հարցնում էին քույր ու եղբայր:

— Զգիտեմ, — ասում էր Արեգը, — ես ոչ մի հարմար նվեր չեմ գտնում, որ մայրիկին արժանի լինի:

Բայց ահա մտենում էր Մարտի ծի տոնը: Բոլորը պատրաստում էին իրենց մայրիկներին ու տատիկներին նվերներ տալ էլ ինչպես կարող էին Լուսիկը, Յոլակն ու Արեգը լրել:

— Ես մայրիկի համար մանուշակներ կտանեմ, հիմա մանուշակներ քիչ կան, մայրիկը ձաղիկներ շատ է սիրում: Այս թե կուրախանա... — մտքում որոշեց Լուսիկը:

— Ես հալրիկից փող կխնդրեմ ու մայրիկի համար մետաքսե գուլպաներ կդնեմ, — որոշեց Յոլակը:

Իսկ Արեգը ինչքան մտածեց, չկարողացավ մայրիկի համար մի հարմար նվեր գտնել ու շատ տիրեց:

Լուսիկը գնաց այգիները և քաղեց տրեին ժպտացող առաջին մանուշակները:

Յոլակը հայրիկից խնդրած փողով մայրիկի համազ  
զնեց մետաքսե ամենաբնտիր գուլպաներ:

Եկագ Մարտի 8.ի օրը:

Առավոտյան շատ վաղ Լուսիկը ջրում դրած թարժ  
մանուշակների փունջը ձեռքին մոտեցավ, պարզեց մայ-  
րիկին ու հպարտորեն ասաց.

— Շնորհագմբ քո տոնը, մայրիկ:

Մայրն ընդունեց ծաղիկները, գրկեց, համբուրեց  
լուսիկի այտերն ու ասաց.

— Շնորհակալ ես, աղջիկա:

Հետո մոտեցավ Յոլակը, պարզեց փաթեթն ու ասաց.

— Շնորհավորում եմ քո տոնը, մայրիկ:

Մայրիկն որոխացավ, գրկեց, համբուրեց Յոլակի-  
աչքերն ու ասաց.

— Շնորհակալ եմ, տղաս...

Արեգն էլ չհամբերեց, լաց եղագ գառնորեն:

Մայրիկը նրան էլ գրկեց, փաղաքշեց, մազերը շոյեց  
ու ասաց.

— Մի լար, զագակա:

Հետո բոլորը միասին նստեսին սեղանի շուրջը

Երեկոյան գպրոցից տուն եկաւ երեր թովուուն երե-  
խաներ՝ Լուսիկը, Յոլակն ու Արեգը:

Մայրիկն ասաց.


— Հապա, երեխաներ, ցոյց տվեք ձեր օրագրերը:


Բացեց Լուսիկի օրագիրը, այնտեղ շարադրության  
համար սւառցուհին նշանակել էր «3»:

Հետո բացեց Յոլակի օրագիրը: Յոլակն էլ ընկերուջը  
հուշելու համար վարքից «4» էր ստացել Այս որ կարդաց  
մայրիկը, շատ տիրեց:

Վերջապես մայրիկը բացեց Արեգի օրադիրը և նրա  
տիտուր աչքերը փայլեցին ուրախությունից. Արեգը  
թվաբանությունից «5» էր ստացել:

Երեխաներ, ասացեք, ո՞վ բերեց ամենալավ նվերը  
ձայըիկին նրա տոնի օրը...





## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԽԱՐՈՒՅԿԻ ՄՈՏ

Երիտասարդ պարտիզանուհի էլենին ֆաշիստները  
որոշեցին գնդակահարել:

Մահից առաջ նա խնդրեց թույլ տալ վերջին անգամ կերակրել իր չորս ամսական երեխային:

Ֆաշիստական սպան հեղնանքով ժամաց ու ասաց.  
— Կերակրիր:

Էլենը կաթ տվեց իր որդուն: Հետո ֆաշիստները  
սառնասրտորեն կրակեցին նրա վրա, ապա դիակը քաշ

տվին փողոց... Սենյակում դեռ ճշում էր թարմ կաթը  
բերանին փոքրիկ երեխան:

Մարտիկն այնպես լավ է հիշում այդ օրը:

Իսկ երեկոյան անսպասելի կերպով իրենց մութ  
բակում նրա առաջ ցցվեց 13 տարեկան Ստեֆայի  
կերպարանքը...

— Ի՞նչ կա, Ստեֆա:

— Լոիր,— հուզված ասաց տղան, — դու հայ ես,  
այնպես չե՞մ, և քո հայրենիքը Սովետական Միությունն  
է: Ուրեմն քնզ կարող եմ վստահել, դու չես դավաճանի...  
Ես գիշեր պարտիզաների համար հաց պիտի ստացվի:  
Ես գնում եմ անտառ՝ պայմանավորված վայրում խա-  
րուցկ վառելու: Խնդրում եմ, ասա մայրիկիս, որ եթե ես  
չվերադառնամ...

Հետո անսպասելիորեն Ստեֆան զվարթացավ:

— Ասա մալթիկիս, Մարտիկ, որ ինձ ների, ես վաղի  
տուավոտյան անպայման տանը կլինեմ...

Եվ Ստեֆան գնաց: Մարտիկը երկար նայեց հե-  
ռացող ընկերոջ ետեից, հիշեց սպանված Էլենին ու  
մտածեց. «Ի՞նչ քաջ ու անվախ են այս բուլղարացի-  
ները»:


Մարտիկը գնաց Ստեֆայի մայրիկի մոտ, հայտնեց  
ընկերոջ խնդրածը, հետո եկավ տուն ու երկար ժամա-  
նակ չէր կարողանում քներ Մթության մեջ նրան երեւու  
էր Ստեֆան, որ ծածուկ սողում էր դեպի անփառ: Ահա  
նա ցախ է հավաքում, կրակ է վառում: Երակի փայլից նրա  
դեմքը վառ ծիրանագույն է, աչքերը վտովում են խորա-  
մանկ, հաղթական ժղիտով... Հետո Մարտիկի աչքերը  
մշուշփում են: Զքանում է անտառն ու խարույկը, և նա  
երազում տեսնում է Ստեֆային պատկած անկողնում՝  
արյունոտված ու վիրավոր...

— Է՞, ծույլ տղա, դեռ քնած ես...

Ծանոթ ձալնից Մարտիկն արթնացավ։ Նրա առաջ,  
արկոտ սենյակի մեջտեղում կանգնել էր Ստեփան։  
— Հը, ինչպես է, հաջողվեց։  
— Իհարկե, եթե տեսնում ես, որ կանգնած եմ ալս-  
տեղ, նշանակում է հաջողվեց, — պարտության շեշտը  
ձայնի մեջ, պատասխանեց Ստեփան։

Այս պատմությունը Ծաղկաձորի անտառում, խարույ-  
կի մոտ պատմեց Բուլղարիայից հայրենիք վերադարձած  
պատանի Մարտիկ Կյուրեղյանը։ Նա իր կյանքում առա-  
ջին անգամն էր պիոներական ճամբարում։ Եվ երբ երե-  
խաները նրան խնդրեցին որևէ բան պատմել, նա նայե-  
լով խարույկի պայծառ կրակին, հիշեց Ստեփայի զիշերա-  
յին ճանապարհորդությունը, սպանված էլենին, նրա  
ճշցող մանկանն ու այս պատմությունը պատմելով,  
ավելացրեց։

— Օ՛, ինչքան լավ է, որ Բուլղարիան հիմա ազատ  
է։ Բուլղարացիները մի իսկական բարեկամ ունեն, այդ  
ազատարար Սովետական Միությունն է։





## ԾԱՂԿԱՄԱՆԸ

Հակոբիկն իր մայրիկի հետ ապրում էր Հայաստանից հեռու, Հունաստանի մի փոքրիկ քաղաքում։ Հայրը վաղոց մահացել էր, իսկ մայրը մի հարուստի ընտանիքում ծառայում էր որպես տնային աշխատող։

Ել ոչ ոք չուներ նա, ոչ քույր, ոչ եղբայր։ Դրա համար էլ մայրը նրան հաճախ տանում էր իր հետ, որ տանը մենակ չմնա...»

Մալրիկի հետ միասին նա անցնում էր տանտիբուհու՝  
տիկին Ժողեփինայի հարուստ կահավորված սենյակիները՝  
դիտում զարդերը, ճենապակյա ամանեղենն ու անոթները՝  
որոնց վրայից մայրը խնամքով սրբում էր աննշան վու-  
շին...

Տանտիբուհու երեխաները նրան երբեմն մասնակից  
էին անում իրենց խաղերին. երբ «խանութ» էին խա-  
ղում, նրան դարձնում էին ծառա: Մի անգամ էլ Հակո-  
բիկը խնդրեց, որ իրեն խանութպան դարձնեն: Երեխա-  
ները արհամարհանքով նայեցին նրա վրա ու բարձր-  
բարձր ծիծաղեցին.

— Մի սրան նայեցեք, խանութպան է ուղում  
դառնալ...

Այդ ծիծաղը շատ վիրավորեց Հակոբիկին: Նա ձե-  
ծեց երկու տղաներին էլ: Աղմուկի վրա դուրս եկած  
տիկին Ժողեփինան ասաց նրա մայրիկին.

— Անահիտ, քո որդին իրեն շատ վատ է պահում:  
Խնդրում եմ նրան այլևս չբերես քեզ հետ:

Տանտիբուհու կարգադրությունը օրենք էր բոլոր  
համար: Ո՞վ կհամարձակվեր խախտել այն:

Եվ ահա, հետեւալ օրը մայրիկը աշխատանքի եկավ  
առանց Հակոբիկի՝ տխուր, մտազբաղ ու անհանդիսա-  
Դժվար էր Հակոբիկին տանը մենակ թողնել, մենակ ու-  
քաղցած...

Բայց ինչ արած. ուրիշ ելք չկար:

Աստիճանների վրա տիկին Ժողեփինան մայրիկին  
ժպտաց այնպես, ասես ոչինչ չէր պատահեք: Տիկին  
Ժողեփինայի երեխաները նորից խաղում էին, այս ան-

գամ առանց «ծառայի»... Առաջին անգամ նրանք ըոլորը  
շատ տհաճ ու անտանելի երևացին մայրիկին:

Ինչքան էլ մայրիկն աշխատեց չմտածել ու չտանջ-  
վել, չաջողվեց: Նրան թվում էր, թե սենակ, փակված  
սենյակում, Հակոբիկը լաց է լինում, «մայրիկ» կանչում:  
Նետո սկսեց վախենալ, որ նա կարող է խաղալ վառա-  
րանի հետ, այրվել: Ուրիշ էլի շնոր վատ մտքեր պաշա-  
րեցին մայրիկին... Եվ հանկարծ նրան թվաց, թե իր  
Հակոբիկը կախվել է երրորդ հարկի լուսամուտից և  
ընկնում է վար...

Մայրիկը ճշաց: Ռուսական ճենապակյա ծաղկա-  
ժանը, որ վերցրել էր մաքրելու համար, ձեռքից ընկավ  
և զրնգոցով ջարդվեց դահլիճի հենց նոր փայլեցրած  
հատակին:

Իր սենյակից դահլիճ վազեց տիկին Ժողեֆինան:  
Նա չարությամբ լի աչքերով նայեց սարսափահար մայ-  
րիկին ու ճշաց.

— Ի՞նչ արիք դուք, այդ ի՞նչ արիք: Ջարդել ի՞ն Դի-  
մայի Ռուսաստանից ուղարկած ծաղկամանը... Զէ՞ որ  
այս նրա վերջին հիշատակն էր:

Տիկին Ժողեֆինայի ավագ որդին՝ Դիման Փաշիստ  
էր: Պատերազմի ժամանակ նա մեր հայրենիքում զբաղ-  
վել էր խաղաղ բնակչությանը թալանելով, բայց մի  
օր էլ սլաբաթիզանների կողմից սպանվեց իր թալանած  
տներից մեկի պատի տակ:

Ծաղկամանը ջարդելու համար Հակոբիկի մոըը աշ-  
խատանքից հեռացրին:

Անդավ հինգ տարի:

Անտահան իր որդու՝ Հակոբիկի հետ եկան Սովետա-  
կան Միություն ու հաստատվեցին Երևանում: Մայրիկն



առշատանքի մտավ կարի գործարանում, իսկ որդին  
դպրոց ընդունվեց:

Մի անգամ գործարանում երեկութիւն կազմակերպվեց:  
Այդ անմոռանալի օր էր: Շատ գովեցին լավ բանվորու-  
հիներին, նվերներ բաժանեցին, նրանց հետ էլ Հակո-  
քիկի մայրիկին:

Երբ գործարանի դիրեկտորը մայրիկին մատուցեց  
նվերը, նա անչափ ուրախանալով, առաջին պահ չնկա-  
տեց, թե այդ ինչ է: Հետո բացեց փաթեթը, դիտեց  
այն ու գունատվեց... Մայրիկը նվեր էր ստացել ճիշտ  
այնպիսի ճենապակյա ծաղկաման, որ նա ջարդել էր և  
որի համար դուրս արվել աիկին ժողեֆինայի տնից:  
Ռուսական նույն տեսարանները, երիտասարդ պարող-  
ների խումբը՝ ուրախ հարմոնիստով... Այնքան, ալնքան  
իենդանի ու նույնանման, որ Անահիտն առաջին ըոտեին  
աշխինչ չկարողացավ ասել: Հետո նա դարձավ որդուն  
ու շշնջաց.

— Հակոբիկս, գու հիշմում ես այս ծաղկամանը...

Ոչ, Հակոբիկը չէր հիշում,

Մոտիկ կանգնած կանայք տեսնելով իրենց ընկե-  
րուհու հուզումը, հարցրին դրա պատճառը:

Եվ մայրիկը նրանց պատճեց իր կյանքի այն ծանր  
օրերի մասին, որ նա անց էր կացըել հալրենիքից հեռու:  
Պատճեց ջարդված ծաղկամանի պատճությունը և այն,  
թե ինչպես կապիտալիստական երկրներում հարյուր  
հազարավոր մայրեր մի կտոր հաց վաստակելու համար  
իրենց երեխաներին ստիպված են լինում թողնել մենակ  
ու առանց հակողության:

— Այս ծաղկամանը, — ասաց նա, — ամենաթանկներն էին է ինձ համարու նա: ինձ միշտ կհիշեցնի, որ ես ազատվել եմ թշվառությունից:





## ԾՈՒՅԼ ՏՂԱՆ

— Սուրբիկ ջան, դասերդ սովորիր:

— Հիմա, մայրիկ, մի քիչ հանգստանամ...

Մալրիկը մտածեց, որ Սուրբիկը զպրցիցնոր է տուն եկել, նախաճաշից հետո պիտի հանգստանա, ել չառարկեց Անցավ մի ժամ:

— Սուրբիկ, հանգստացար, զե եկ դասերդ պատրաստի՞ր:

— Դասե՞րս... Ու՞ֆ,—տնօքաց Սուրբիկն ու աչքը տնկեց պատուհանից դուրս—Տես, մայրիկ ջան, երեխա-

Ները փողոցում ինչ լավ են խաղում, — ու առանց  
մայրիկի համաձայնությունն ստանալու նա սենյակից  
դուրս ծլկեց:

Մայրիկը փոքրիկ երեխա ուներ, շատ էր զբաղված  
նրանով: Հո չէր կարող ամեն ըստե փողոց վագել, կան-  
չել Սուրբիկին: Այսպես անցավ երկու ժամ: Սուրբիկը  
վագեց, վաղվեց, աչքակապուկի խաղաց, քշեց ընկերոջ  
հեծանիվը, ու մի անծանոթ տղայի ծեծելուց հետո,  
հեալով տուն եկավ հայրիկի գալուց մի քանի ըստե  
առաջ:

Ճաշեցին:

Հետո մայրիկը զբաղվեց խոհանոցում, իսկ հայրիկը  
սկսեց կարգալ օրվա թերթերը:

«Ի՞նչ լավ է, որ ինձ չեն նկատում: Բայց դե այս-  
պիս չի անցնի, հիմա կտեսնեն: Պետք է մի բան անել»,  
— մտածեց Սուրբիկը: Նա այս կողմ նայեց, այն կողմ  
նայեց, աչքն ընկալ «Մոքինզոն կը ուղարկոյին», վերցրեց  
այն ու սկսեց կարգալ:

Հայրիկը նայեց ու մտածեց.


— Ի՞նչ խելոքացել է իմ տղան, եթե դաս է սովորում,  
չխանգարեմ...

— Ի՞նչ լուրջ է այսօր իմ տղան: Ել չիշեցնեմ, ինքն  
է սկսել դաս պատրաստել: Երեխ պատմություն է սովո-  
րում, — մտածեց մայրիկը:

Իսկ Սուրբիկը աչքի պոչով նայում էր ու հրճվում  
իր հնարամառության վրա: Բայց նա կարող էր այդքան  
երկար նստել: Հոգնելով՝ սկսեց չարանալ մոքինզոնի  
համառ աշխատասիրության վրա:

Դեռ այդ ոչինչ: Մի քանի անգամ էլ նրան թվաց,  
թե կը ուղարկոն հեղնանքով ասում է.

— Է՞ և, եղբայր, դասերդ սովորել ես...



Ալդ շատ զայրացրեց Սուրիկին։ Նա խռովեց  
Կրուղոյից ու բարկացած ասաց։


— Դե իհարկե, քեզ համար հեշտ է, ոչ մայրիկդ  
է վրադ բարկանում, ոչ էլ հայրիկդ հանդիմանում...

Կրուղոյի հետ զբաղվելը երկար չտևեց։ Նա սկսեց  
ձանձրանալ, հետո մի ծիգ հորանջեց ու կողքի վրա շուռ  
դալով... քնեց։

Գիրքն աղմուկով ընկալ հատակին։ Բայց Սուրիկը  
չարթնացավ։ Մայրիկը մոտ վազեց իր «խելոք» բալի-  
կին անկողնում տեղափորելու համար, բայց նրա մոտ  
պատմության դասագրքի փոխարեն դտավ միայն «Ռո-  
բինզոն Կրուղոն»։

Այսպես անցավ Սուրիկի օրը։

Երեխաներ, Սուրիկը սովորում է 4-րդ դասարանում։  
Բայց ինչ եք կարծում, նա 5-րդ դասարան՝ կփոխադրվի...





## ՍԵՓԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Այն տունը, որտեղ ապրում էին Աստղիկն ու տատիկը, պատկանում էր մի հաստ քեռու, որին տան կենքորները «Որոտ» էին անվանում: Դեռ ամսվա սկզբին նա բարկացկոտ իջնում էր երրորդ հարկից, անցնում բոլոր բնակարանները և վարձ պահանջում:

Եվ ամեն անգամ Աստղիկը տեսնում էր, թե ինչպես տատիկը գունատվում է նրա երեալուց, դառնում ավելի ծեր ու դողդոջուն:

Այս անգամ էլ տատիկը չկարողացավ ժամանակին վճարել տան վարձը: Նա նորից աղաչանքով լի հայացքը դարձրեց դեպի տանտերն ու ասաց:

— Մի քանի օր էլ սպասեցեք, պարսն...

Բայց «Որոտն» այս անգամ չսպասեց: Նա հեռախոսով ոստիկաններ կանչեց, որոնք տատիկին Աստղիկի ու աղքատիկ իրեղենների հետ միասին փողոց շպրտեցին:

— Դուք ձեր սեփական տանը չեք ապրում, տիկին, պետք է անհանգստանայիք, — արհամարհանքով ասացին ոստիկանները...

Մի գեղեցիկ, շքեղ հազնված կին թեքվեց փողոցում անօդնական ընկած երեխայի վրա:

— Օ՛, Անրի, նայիր, ինչքան չքնաղ արարած է, — գոչեց նա դառնալով կողքին կանգնած տղամարդուն:

— Ի՞նչ քմահաճն ես, Սոֆի, թող դրան, միթե չես տեսնում, թե որքան կեղառ է:

— Կեղառ է, այդ ոչինչ, — առարկեց կինը, — ես նրան մաքրել կտամ, գեղեցիկ շորեր կհազցնեմ ու նա կդառնա հրաշալի մանկիկ: Ապա, նայիր նրա աչքերին...

Մանկան աչքերը ճիշտ որ գրավիչ էին. Նրանք նայում էին անբուժելի թախիծով: Բայց տղամարդը չնկատեց այդ: Նա միայն ձեռքը թափ տվեց ու ասաց:

— Ի՞նչպես կուղես, միենույն է, քեզ հետ գժվար է վիճել...

Նա մեքենավարին հրամայեց երեխալին տեղավորել ավտոլի մեջ ու քշել:

Աժրողջ ճանապարհին տիկինը խոսեցը երեխային, բայց պատասխան չստացավ: «Երևի համը է» մտածեց տիկինը և նրա հիացմունքը փոխվեց խղճահարության: Նա փոքրիկի ստուծ ձեռքերն առավ իր ափերի մեջ, շփեց, որ տաքացնի: Երեխան դարձյալ մնաց լուռ ու

անհաղորդ: Նա կարծես չէր զգում, թե ինչ է կատարվում իր հետ: Հինգ տարեկան Աստղիկի հիշողության մեջ մնացել էր միայն իր տատիկը, որին անծանոթ մարդիկ փաթաթեցին մի հին սպանի մեջ, որին սայլի վրա ու տարան: Աստղիկը ոչ մի կերպ չէր հասկանում, թե ինչու տատիկին տարան, իսկ իրեն ոչ: Նա լաց եղավ, կանչեց տատիկին, որ իրեն էլ տանի, բայց անօգուտ: Սայլը գնաց, իսկ բարի, միշտ ուշադիր տատիկը նրան այս անգամ թողեց անպատճախան...

Այսպես մի քանի օր նա մնաց փողոցում, անցորդների խնամքին, մինչև այս անծանոթ կինը նրան իր տունը տարավ...

Սոֆին կանչեց իր աղախին Աշխենին, երեխային տվեց նրան, որ լողացնի, փաթաթի բաղնիսի խալաթի մեջ ու նստեցնի բազմոցին: Հետո նա պատրաստի հագուստներ բերել տվեց, հազցրեց Աստղիկին, փայփայեց նրան, լավ ուտելիքներ պատրաստեց նրա համար:

Բայց իզնւր ջանք: Երեխան լուռ էր: Տիկինը շուտով հիասթափվեց: Մանկան գեղեցիկ աչքերը այլևս չէին թուփում իրենց գրավչությամբ...

Երեխան միայն մի անգամ խոսեց, երբ տիկինը սենյակում չէր: Աշխենի մի քանի հարցերին նա միայն պատասխանեց.

— Մենք սեփական տուն չունենք...

Ի՞նչ տարօրինակ պատասխան: Աշխենը սարսուց ամրող մարմնով: Նա չէր կարող իմանալ, որ երեխայի հիշողության մեջ մնացել են բնակարանից դուրս նետվելու օրն ասված ոստիկանի վերջին բառերը: Բայց երեխայի պատասխանը նրա մեջ արթնացրեց դառն մտածություններ... Ոչ միայն այդ երեխան, որին իր տիկինը գտել

Է փողոցում և այժմ փակիայում է որպես մի դեղեցիկ կատվի ձագի, ալլև ինքն ու իր նման շատ շատերը օտարության մեջ ալդպես անտուն ու անհայրենիք են: Աշխենը հառաչեց: Ինչպես նման է այդ երեխայի ճակատագիրը իր սեփականին...

Թեև սենյակում տաք էր, բայց նա նորից ծածկեց պառկած երեխային ու նրա սրտում խլբաց մայրական սեր դեպի այդ փոքրիկ աղջիկը:

— Ինչպես է քո անունը, բալիկ, — հարցը նա քընք շութքամբ:

— Իմ անունը Աստղիկ է, տատիկիս անունն էլ Մարո, մենք սեփական տուն չունենք...

— Ուրեմն՝ նա հայ է, — ուրախացավ Աշխենը:

Մյուս օրը ամենին Սոֆին հայտարարեց, թե երեխան իրեն բոլորովին ձանձրացրել է:

— Նա ինչ որ վայրենի է, թե ապուշ, չեմ հասկանում... Պետք է մի ծանոթ գտնել, նվիրել, կամ դիմել բարեգործական ընկերություն, որ նրան տեղավորի մանկատնում, — վնթինթաց նա:

— Ես նրան կվերցնեմ, ամենին, թող մեծանա իմ երեխաների հետ:

— Ի՞նչ ես ասում, Աշխեն, առանց այն էլ դու հինգ երեխա ունես:

— Թող սա էլ լինի վեցերորդը: Ես և ամուսինս մի կերպ օրվա հացը կհասցնենք:


Այս դեպքից երկու տարի հետո մի հոգնած դեմքով ու նիհար կին իր վեց երեխայի հետ բարձրացավ իր համար անծանոթ աստիճաններով ու մտավ մի բավական հաճելի ու լուսավոր բնակարան: Այդ նրա տունն էր:


Նրա դեմքը երջանկությունից շողաց: Քիչ հետո եկավ նրա ամուսինը, բերելով տնային իրերը:

Այդ կինը Աշխենն էր։ Հալը հաղարձների առաջին  
քարավանով նա եկավ Երևան, իր հետ բերելով նաև  
գեղեցիկ Աստղիկին։

Իրերը տեղափորելուց հետո նա տիրաբար բացեց  
մեծ սենյակի լայն պատուհանները, նայեց իր առաջ  
փուլած կանաչազարդ քաղաքին, նայեց դիմացը հավերժ  
ճերմակաթաղ Մասիսներին, ու իր երեխաների միջից  
ընտրելով Աստղիկին, գրկեց նրան, համբուրեց ու ասաց։

— Ուրախացիր, զավակս, մենք հիմա սեփական տուն  
ունենք։





## ՔԵՐԻ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ ԱՆԴՐԵՅԸ

Մայրիկը ժամը օ-ին Արեգին՝ մանկապարտեզից տուն բերեց, խաղալիքներ ու զբքեր տվեց նրան ու պատվիրեց.

— Արեգ ջան, դու խաղա, ևս գնամ խանութից հաց բերեմ: Հաց բերեմ, որ հայրիկն էլ գա՞ ճաշենք: Լավ...

— Լավ,— մամա ջան, դնա հաց բեր, որ ճաշենք:

Մայրիկը գնաց խանութ, իսկ երբ մի քանի բոպեից  
վերադարձավ, տեսավ, որ Արեգի վոլխարեն հայրիկն է  
նստած թախտին:

— Սուրեն, իսկ ուր է Արեգը, կանչիր դա ճաշենք...

— Արեգը, — զարմացավ հայրիկը, — ես Արեգին  
չեմ տեսել Միթե դու նրան մանկապարտեղից տուն  
ես ըերել:

— Դե իհարկե բերել եմ: Վայ, Արեգս ուր է...

Եվ մայրիկն ու հայրիկը սկսեցին փնտրել Արեգին:  
Բայց Արեգը չկար ու չկար: Ոչ բակում, ոչ հարևանների  
տանը:

Երբ մայրիկը գնաց խանութ, Արեգը սկսեց մտածել:  
«Ես էլ գնամ խանութ, մամայիս օդնեմ, հաց բերենք:  
Ապա ինչու է Սեղան իր մայրիկին օդնում», — այսպես  
որոշեց նա և գրքերն ու խաղալիքները թողնելով, թախ-  
տից իջավ, բացեց դուռը և դուրս եկավ փողոց:

Հարևանուհու աղջիկը՝ Սեղան նրան հարցրեց.

— Արեգ, այդ ուր ես գնում:

— Գնում եմ մամայիս օդնեմ, որ հաց բերենք  
խանութից:

Սեղան ծիծաղեց Արեգի ասածի վրա ու մտավ իրենց  
տունը: Իսկ Արեգը գնաց, հասավ խանութին ու  
տեսավ, որ խանութը փակ է, մայրիկն էլ չկա:

— Վայ, մայրիկս ուր է գնացեր:

Ու սկսեց փնտրել մայրիկին:

Գնաց Արեգը, հասավ մի ուրիշ փողոց: Շատ-շատ  
կանայք կային այնտեղ, բայց ոչ մեկը մալրիկին  
նման չէր:

Մի տղա մոտեցավ նրան ու հարցրեց:

— Փոքրիկ, ալդ ում ես փնտրում:

— Մայրիկս եմ փնտրում, որ նրան օդնեմ, խա-  
նութից հաց բերենք...

— Այս քեզ օգնական, — ծիծաղեց տղան ու հեռացավ:

Արեգը էլի շատ որոնեց մայրիկին, այնքան, որ մութն ընկավ, ճանապարհն էլ կորցրեց: Էլ ուր գնար կանգնեց մի պատի տակ ու սկսեց լաց լինել.

Վայ, մամա ջան...

Սլոր ժամանակ փողոցով մի միլիցիոներ էր անցնում: Ես տեսավ լացող երեխային ու մոտեցավ:

— Ինչու ես լալիս, փոքրիկ տպա:

Արեգը չպատասխանեց:

Միլիցիոները զբանից մի կանֆետ հանեց, ավեց նրան: Բայց Արեգը չվերցրեց:

— Ես կանֆետ չեմ ուզում, ես տուն եմ ուզում...

— Իսկ ձեր տունը որտեղ է, — հարցրեց անծանոթ քեռին:

— Զիտեմ, մայրիկս գիտե, — լալով ասաց Արեգը:

Միլիցիոները մի քիչ մտածեց ու ասաց:

— Լաց մի լինի, արի գնանք ինձ հետ, ես քեզ տուն կատանեմ:

— Տեսն...

— Այս:

— Չէ՛, ես չեմ ուզում, դու միլիցիոներ ես, ինձ կտանես Անդրեյի մոտ:

Քեռի միլիցիոները զարմանքով նայեց Արեգին ու ծիծաղեց.

— Անդրեյը ով է, փոքրիկս:

— Արդրեյը: Անդրեյին էլ չգիտես: Այս, էն Անդրեյը, որ չար ու լալկան երեխաներին չի սիրում:

— Բայց միթե դու չար ես:

— Ոչ, քեռի, ես չար չեմ, ես միայն մայրիկիս եմ ուզում:

— Դե լավ, արի քեզ տանեմ մայրիկիդ մոտ:

Արեգը նալեց միլիցիոներ քեռուն, նրա կրծքի լենինի  
շքանշանին ու վստահելով ձեռքը մեկնեց:

Դնացին նրանք ու հասան մի մեծ շենքի: Քեռին  
Արեգին դրկեց, բարձրացրեց աստիճաններով, ու լուսա-  
վոր միջանցքով անցնելով, կանգնեց մի գռան առջև: Նա  
դրանից հանեց մի փոքրիկ, փայլուն բանալի, բացեց  
դուռը և Արեգի հետ ներս մտնելով, վառեց լույսը:

Սենյակում շատ տաք էր, մաքուր: Մի կողմում  
գրված էր սպիտակ ծածկոցով բազմոց, մյուս կողմում  
գրասեղան ու աթոռներ: Պատին Ստալին պապիկի պատ-  
կերն էր, որ կարծես Արեգին ժապաց ու ասաց.

— Բարե՛, բարե՛, Արեգ ջան, ալս ինչու մինչև հիմա  
չես քնել:

Քնոի միլիցիոների սեղանին այնքան լավ բաներ  
կային. սիրուն մարմարյա թանաքաման, կանաչ լուսամ-  
փոփ, մատիտներ ու գրիչներ և հեռախոս:

Արեգին բազմոցին նստեցնելուց հետո քեռի միլի-  
ցիոները ինչոր մեկի հետ երկար-երկար հեռախոսով  
խոսեց: Արեգը չիմացավ, թե ում հետ է նա խոսում:

Չանցած մի քանի բոպե, հնչեց հեռախոսի դանդը...

— Հարկավոր չէ, — պատասխանեց քեռի միլիցիոները  
իր խոսակցին: — Հայտնեցիք ինձ նրանց հասցեն, ես ինքս  
երեխային տուն կտանեմ...

Նա հեռախոսափողը դրեց տեղը և ուրախ-ուրախ  
հարցըց:

— Փոքրիկս, ինչպես է քո անունը:

— Իմ անունը Արեգ է, Արեգ:

— Դե, Արեգ ջան, հիմա մենք ավտո կնստենք ու  
կդնանք ձեր տուն...

— Այս, քեռի, գնանք տուն:

— Իսկ զու ինձ թելով կհյուրասիրեմ:

— Այս, կհյուրասիրեմ: Մենք մուրաբա էլ ունենք:

Քեռի միլիցիոները նորից գրկեց Արեգին, իշեցրեց

աստիճաններից և նրան նստեցրեց «Պոբեգա» ավտոյի

մեջ: Մեքենավարը դեկի մոտ էր: Արեգը նրան ասաց.

— Բարե ձեզ, ընկեր, դուք մեր տունը ճանաւ-

չում եք:

Մեքենավարը ժպտաց ու ասաց.

— Այս, իհարկե, ճանաչում եմ — Մարքսի փողոց

համար 69.

Մեքենան վը ըստ, սլացավ տուած: Ճանապարհին

քեռի միլիցիոները Արեգին ասաց.

— Տես, եթե մյուս անգամ տուանց մայրիկի զու

տանից հեռանաս, ես քեզ չեմ զտնի ու մայրիկի մոտ

չեմ տանի: Հասկացար, Արեգ:

— Այս, քեռի, հասկացա:

Ավտոն հասավ Մարքսի փողոց, համար 69 տանը:

Քեռի միլիցիոները Արեգին ավտոլից դուրս բերեց ու

տուն տարավ:

Հենց որ մայրիկը նրան տեսավ, ուրախությունից

լաց եղավ ու գրկեց, փաղաքշեց Արեգին: Իսկ հալրիկն

ասաց.

— Աշխեն, խնդրում եմ Արեգի հետ մի քիչ խիստ

վարվիր: Նրան հարկավոր է ոչ թե փաղաքշել, այլ

պատժել:

Քեռի միլիցիոները շատ բարի էր: Նա ասաց հայ-

րիկին.

— Ընկեր քաղաքացի, խնդրում եմ այս անգամ

Արեգին ներեք: Նա խոստանում է մյուս անգամ մենակ

փողոց չվաղել...


— Շատ լավ, ընկեր կապիտան Անդրեյ, ես նըան  
այս անգամ կներեմ..

Հայրիկը սեղմեց քեռի կապիտան Անդրեյի ձեռքը,  
շնորհակալություն հայտնեց, իսկ մայրիկը նրան հյու-  
լասիրեց մուրաբայով՝ թեյով։

Երբ բարի քեռին վեր կացակ և հրաժեշտ ավեց ըոլորին, Արեգը մասեցավ նրան ու կամացուկ հարցըց.

— Քեռի, բայց միթե դու Անդրեյն ես...

— Այս, ես Անդրեյն եմ, — բարեհողի ժպտաց նուու  
համբուռելով Արեգի թշիկը՝ «բարի դիշեր» ասաց ու դնաց:



ՅՈՒԱՆԳԱԿԱՐԵՅՑՈՒՆ

1. Ամենալավ նվիրը	3
2. Պատմություն խարսռակի մաս	7
3. Ծաղկամանը	10
4. Ծույլ տղան	16
5. Սեփական տունը	19
6. Քեռի միլիցիոներ Անդրեյը	24


Պատ. խմբագիր՝ ԱՆԱԳԻՆԻ  
Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ  
Կոնսորու սրբագրիչ՝ Հ. ԴՅՈՒՇԻՆՅԱՆ

Կ.Ֆ. 04412, Պատվիր 1347, Տիրաժ 3000,  
Տպագրական 2 Ժ.

Հանձնված է արտադրության 4/X—1949 թ.  
Ստորագրված է տպագրության 15/XI 1949 թ.

---

Հայպոթգրաֆիրատի վարչության № 1 տպարան, Երևան,  
Լևինի փ. № 65, 1949 թ.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220030672

[154]

Գիւղ 1 Ռ. 50 կ.

